

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՔԱՐՀԱՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԳԱԳԻԿԻ

**ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ**

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր՝ **Ս. Ս. Սողոյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր՝ **Ա. Վ. Աբրահամյան**
մանկավարժական գիտությունների թեկնածու՝ **Վ. Ա. Բրուտյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. դեկտեմբերի 12-ին ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՎ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:


Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. նոյեմբերի 12-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական

խորհրդի գիտական քարտուղար՝

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ



Ա. Փ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից հասարակությունը թևակոխել է զարգացման և փոխակերպման այնպիսի փուլ, որն ենթադրում է մարդկանց, տարբեր ազգերի և մշակույթների մակարդակով շփումների նոր հարթություն: Դա իր հերթին պահանջում է նոր մոտեցումներ և բնութագրումներ միջսուբյեկտային, միջխմբային շփումներին, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերման միջոցներին ու ձևերին:

«Կրթական նոր քաղաքականության մեջ հիմնական առաջնահերթություն է հանդիսանում կրթության հիմնարարության և համապիտանիության ապահովումը:

Հայաստանի Հանրապետությունում 12-ամյա կրթական համակարգին անցումը նոր հնարավորություններ տվեց վերանայելու ուսումնական ծրագրերը և պլանները: Մասնավորապես, ըստ գործող ծրագրերի, 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակն ամբողջությամբ տրամադրվում է ավարտական քննական առարկաներից կրկնությունների, խորհրդատվությունների և անհատական պարապմունքների կազմակերպմանը: Սակայն չի կարելի ասել, որ այսօր ամբողջությամբ մշակված են ընդհանրացնող կրկնությունների կազմակերպման արդյունավետ տեխնոլոգիաները, որոնք կարող են ապահովել կրկնությունների բարձր մակարդակ՝ մասնավորապես բնագիտամաթեմատիկական առարկաներից:

Հաշվի առնելով այն մեծ ժամաքանակը, որն այսօր նախատեսված է ավագ դպրոցում կրկնությունների համար, անհրաժեշտություն է առաջացել նորովի վերլուծել մանկավարժության մեջ կրկնությունների կազմակերպման դիդակտիկական նշանակությունը և մշակել կրկնությունների կազմակերպման մանկավարժահոգեբանական նոր պայմաններ՝ հաշվի առնելով հիմնարար գիտությունների և սովորողների տարիքահոգեբանական առանձնահատկությունները և մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաները:

Դիտարկվող հիմնախնդրի վերլուծությունը և մանկավարժական փորձի ուսումնասիրությունը թույլ տվեցին բացահայտելու ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման հարցում առկա հետևյալ **հակասությունները՝**

1. ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման գործընթացի վերջում ակնկալվող արդյունքի և կրկնությունների կազմակերպման արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաների բացակայության միջև:

2. ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման ժամանակ տվյալ

առարկային բնորոշ կողմերի և սովորողների տարիքահոգեբանական առանձնահատկությունների հաշվառման անհրաժեշտության և տարբերակված ուսուցման պայմաններում կրկնությունների կազմակերպման մանկավարժահոգեբանական անհրաժեշտ արդյունավետ ուղիների բացակայության միջև:

Ելնելով առկա հակասություններից կարելի է հստակ սահմանել հետազոտության **հիմնախնդիրը՝** ավագ դպրոցում կրկնությունների արդյունավետ կազմակերպման մանկավարժահոգեբանական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով բազային գիտությունների և սովորողների տարիքահոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակն է մշակել, տեսականորեն և մշտադիտարկմամբ հիմնավորել ավագ դպրոցում կրկնության կազմակերպման արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաներ՝ հաշվի առնելով ուսուցման գործընթացի առանձնահատկությունները:

Հետազոտության օբյեկտը ավագ դպրոցում կրկնության կազմակերպման գործընթացն է:

Հետազոտության առարկան ավագ դպրոցում կրկնության կազմակերպման արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաներն ու պայմաններն են:

Ելնելով հետազոտության նպատակներից, հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունից, ամփոփելով մասնագիտական առկա փորձը՝ մենք առաջադրել են հետազոտության **վարկածը**. ավագ դպրոցում կրկնության գործընթացում սովորողների գիտելիքների համակարգումը, ընդհանրացումը և մտածողության զարգացումը կլինի առավել արդյունավետ, եթե՝

1. Կրկնությունը դիտարկվի՝ որպես ուսուցման ընդհանրացնող միջոց և կառուցվի նախկինում ուսուցանված նյութի հիմնարար, առանցքային գաղափարների և հասկացությունների վրա:

2. Մշակվեն և ներդնվեն կրկնության կազմակերպման արդյունավետ մանկավարժական պայմաններ, որում հաշվի է առնվում տվյալ առարկայի բնորոշ կողմերը և սովորողների տարիքահոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել և վերլուծել մանկավարժության մեջ կրկնության գործընթացի տեսությունը և պրակտիկան:

2. Բացահայտել և հիմնավորել ավագ դպրոցում բնագիտամաթեմատիկական առարկաներից կրկնությունների կազմակերպման գործընթացի

առանձնահատկությունները՝ դիտարկելով այն որպես ուսուցման ընդհանրացնող միջոց:

3. Մշակել ավագ դպրոցում կրկնության կազմակերպման արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաների իրականացման հնարավոր ուղիները:

4. Բացահայտել, մշտադիտարկման ընթացքում հիմնավորել մանկավարժական այն պայմանները, որոնք կնպաստեն ավագ դպրոցում կրկնության արդյունավետ կազմակերպմանը:

Հետազոտության համար մեթոդական հիմք են հանդիսացել.

▪ Անձնակողմնորոշիչ ուսուցման տեսությունները (Ն. Ա. Աֆանասյեվ, Ի. Ա. Յակիմանսկայա, Ա. Ա. Պլիգին, Մ. Ի. Ջայկին և այլք),

▪ կրկնությունների կազմակերպման հայեցակարգային դրույթները (Գ.Վ. Բեգրուկովա, Վ.Ա. Դալինգեր, Մ. Կ. Բիշևսկի, Վ. Ի. Կոտելնիկով Ա.Ս. Շատուրյան, և այլք),

▪ կրկնությունների կազմակերպման հոգեբանամանկավարժական տեսությունները (Գ. Կ. Սերեդան, Օ. Կյուպե, Վ. Յ. Լաուդիսը, Լ. Ա. Վիգոտսկի, Յու. Ա. Սամարին և այլք),

▪ ուսումնական գործընթացի կառուցման և կազմակերպման տեսությունները և տեխնոլոգիաները (Վ.Պ. Բեսպալկո, Վ. Ա. Դալինգեր, Ն.Գ. Կլինա և այլք):

Հետազոտության մեթոդները: Հետազոտության տարբեր փուլերում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության, իրավական-նորմատիվային փաստաթղթերի, տեսական հայեցակարգերի ուսումնասիրում, կրկնությունների կազմակերպման հայրենական և արտասահմանյան փորձի վերլուծություն, մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում, դիտում, զրույց, հարցազրույց, թեստավորում, ինքնագնահատում, արդյունքների վերլուծության մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության բազա են հանդիսացել ավագ դպրոցի սովորողները և ուսուցիչները, որոնց շրջանում անցկացվել են մշտադիտարկումներ: Մշտադիտարկումներն իրականացվել են Վանաձորի Ս. Նալդանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցում, Գուգարքի Հովի. Շիրազի անվան ավագ դպրոցում, ՀՀ ԿԳՆ Վանաձորի մաթեմատիկական և քնագիտական առարկաների խորացված ուսուցման հատուկ դպրոցում (Էվրիկա) և Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային ավագ դպրոցում, Գյումրու «Ֆոտոն» վարժարանում, Ակադեմիական վարժարանում, Գյումրու թիվ

1 ավագ դպրոցում:

Մշտադիտարկմանը մասնակցել են ընդհանուր առմամբ 417 մարդ՝ 32 ուսուցիչ և 385 սովորող:

Հետազոտությունն անցկացվել է 3 փուլով:

Առաջին փուլում (2008-2010թթ.) ուսումնասիրվել են հետազոտվող հիմնախնդիրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, սոցիոլոգիական, մեթոդական գրականությունը, իրավական-նորմատիվային փաստաթղթերը, ուսուցման գործընթացում կրկնությունների կազմակերպման նախկին, արդի հայրենական ու արտասահմանյան փորձը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, վարկածը, մշակվել է մշտադիտարկման անցկացման մեթոդիկան:

Երկրորդ փուլում (2010-2012թթ.) ձևակերպվել և մշակվել է ուսուցման գործընթացում կրկնությունների կազմակերպման սկզբունքները, բացահայտվել և հիմնավորվել են ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաները:

Երրորդ փուլում (2012-2014թթ.) վերլուծվել, ընդհանրացվել, հիմնավորվել են հետազոտության արդյունքները, իրականացվել է մշտադիտարկում, վերլուծվել և ամփոփվել են մշտադիտարկման ընթացքում ստացված տվյալները, հաստատվել են առաջադրված վարկածները, ձևակերպվել են եզրակացությունները, շարադրվել է առենախոսությունը:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Մշակվել են նոր մոտեցումներ, որոնք ընդլայնում են ավագ դպրոցում ընդհանրացնող կրկնությունների արդյունավետ իրականացման հնարավորությունները և բարձրացնում սովորողների մրցունակությունը:

2. Մշակվել և մշտադիտարկմամբ հիմնավորվել է ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման գործընթացի կատարելագործման նոր ուղիներ ու միջոցներ՝ կապված մանկավարժական արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման հետ:

3. ՀՀ առաջին անգամ կատարվել է հիմնարար տեսական հետազոտություն՝ ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման վերաբերյալ՝ դիտարկելով կրկնությունը՝ որպես ուսուցման ընդհանրացնող միջոց:

Հետազոտության տեսական նշանակությունը:

1. Նորովի է դիտարկվել ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման մանկավարժա-հոգեբանական համակարգը, առաջ է քաշվել կրկնությունների արդյունավետ կազմակերպման հայեցակարգային դրույթներ:

2. Մշակվել են ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման արդյունավետ մանկավարժական պայմանները՝ դիտարկելով կրկնությունը որպես ուսուցման ընդհանրացնող միջոց:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները և եզրակացությունները կարող են հիմք հանդիսանալ ավագ դպրոցում բնագիտական առարկաներից կրկնությունների կազմակերպման գործընթացում՝ համապատասխան ռազմավարության մշակման, նոր ծրագրերի կազմման, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման ժամանակ:

Պաշպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները՝

1. Ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման արդյունավետությունը կբարձրանա կրկնությունը՝ որպես ուսուցման ընդհանրացնող միջոց դիտարկելու դեպքում:

2. Ավագ դպրոցի սովորողների գիտելիքների որակի և ստեղծագործական մտածողության բարձրացմանը կնպաստի կրկնությունների կազմակերպման ժամանակ արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաների հետևողական ներդրումը:

3. Ավագ դպրոցում կրկնությունների գործընթացի արդյունավետությունը կբարձրանա, եթե դրանց կազմակերպման ժամանակ հաշվի առնվեն առարկաների բնորոշ կողմերը և սովորողների մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները, այն ամրապնդելով լայն կիրառմամբ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում են կրկնությունների կազմակերպման, վերաբերյալ հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության, մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, մասնագիտական փորձի համակողմանի ուսումնասիրությամբ և արված ընդհանրացումներով, հետազոտության տեսական-մեթոդաբանական ելակետային հիմունքների հիմնավորված բնույթով, հետազոտության հիմնախնդրին, նպատակին ու խնդիրներին համարժեք տեսական և փորձնական մեթոդների համալիր կիրառմամբ, իրականացված մշտադիտարկման ընթացքում ստացված տվյալների նպատակաուղղված վերլուծությամբ, ընդհանրացմամբ, հետազոտության հիմնական արդյունքների փորձաքննությամբ, եզրակացությունների, տվյալների մշակման ժամանակակից մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության փորձաքննությունը իրականացվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի նիստերում,

հրատարակված գիտական հոդվածներում, հետազոտության բազա հանդիսացած համապատասխան հաստատություններում, մասնագիտական վերապատրաստման գործընթացի շրջանակներում կազմակերպված դասախոսություններում, զեկուցումներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 147 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվել է հիմնախնդրի հրատապությունը, բացահայտվել է նրա մշակվածության աստիճանը, որոշվել են նպատակը, հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները, ձևակերպվել է աշխատանքային վարկածը: Ներկայացվել են հետազոտության մեթոդաբանական աղբյուրները, մեթոդիկան, նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին՝ «Կրկնության գործընթացի կազմակերպման տեսական հիմունքները մանկավարժության մեջ»** խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում հանգամանալից դիտարկված են կրկնության կազմակերպման տեսական հիմքերը, կրկնության կազմակերպման առանձնահատկությունները, դրանց տեսակները, դերն ու տեղը ուսուցման գործընթացում, ինչպես նաև կրկնության գործընթացի կազմակերպման հոգեբանամանկավարժական հիմքերը:

Հիմնավորված է, որ կրկնությունը ուսուցման ողջ գործընթացում կարևոր դեր է խաղում և հանդիսանում է վերջինիս բաղկացուցիչ մաս: Վերլուծելով կրկնության տեսակների ամբողջությունը, մատնանշելով դրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը ուսուցման գործընթացում, ցույց է տրվել, որ անկախ կազմակերպման տեսակից կրկնությունների հիմնական նպատակն է սովորողների գիտելիքների ընդհանրացումը տվյալ առարկայի հիմնարար գաղափարների (տեսություններ, օրենքներ, օրինաչափություններ, հասկացություններ և այլն) շուրջ:

Հաշվի առնելով, որ կրկնության ժամանակ ուսումնական նյութի խորը գիտակցումը սովորողներից պահանջում է ակտիվ մտավոր գործունեություն, մեր կողմից կրկնությունը դիտարկվում է որպես դինամիկ(շարժուն) ուսումնական

գործընթաց, որի ընթացքում լայն հնարավորություններ կան զարգացնել սովորողների մտավոր գործունեությունը:

Մանկավարժական, հոգեբանական և մեթոդական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանրացնող կրկնության արդյունավետությունը պայմանավորված է մարդկային մտածողության բնույթով, նրա առանձնահատկություններով, ինչը հաստատված է ճանաչողության տեսության օբյեկտիվ օրենքներով, հոգեբանության և ֆիզիոլոգիայի օրինաչափություններով: Վերջինս հիմք է հանդիսացել վերլուծելու կրկնության գործընթացի կազմակերպման ժամանակ սովորողների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների տարբեր կողմերը և նախանշելու դրանց հիմնական գործառույթները կրկնության ժամանակ:

Ատենախոսության **երկրորդ՝ «Ավագ դպրոցում կրկնության կազմակերպման արդյունավետության բարձրացման մանկավարժական տեխնոլոգիաները»** վերնագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում դիտարկված են ավագ դպրոցում բնագիտամաթեմատիկական առարկաների կրկնության կազմակերպման արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաները, կրկնության կազմակերպման արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաների իրականացումը բնագիտամաթեմատիկական առարկաների օրինակով, կրկնության կազմակերպման մանկավարժական մշտադիտարկման անցկացումը և արդյունքների վերլուծությունը:

Հաշվի առնելով կրկնության գործընթացի կազմակերպման մեթոդաբանությունը, նրա առանձնահատկությունները և հոգեբանամանկավարժական կողմերը մի կողմից և կրկնության դիդակտիկական նշանակությունը, տեղն ու դերը ուսուցման գործընթացում մյուս կողմից, երկրորդ գլխում մեր կողմից առաջ է քաշվել այն գաղափարը, որ կրկնությունը պետք է դիտարկել որպես ուսուցման մի գործընթաց, որի ժամանակ ընդհանրացվում են սովորողների գիտելիքները: Կրկնության գործընթացի կազմակերպման որակը բարձրացնելու նպատակով առաջարկվել է արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառում, որոնցում հաշվի է առնված ուսուցանվող առարկաների բազային գիտությունների և սովորողների տարիքահոգեբանական առանձնահատկությունները:

Կրկնության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մեր կողմից ներկայացվել են մանկավարժական տեխնոլոգիաներ, որոնք հիմնվում են ուսուցանվող նյութի դիդակտիկական կատարելագործման և վերակառուցման գաղափարի վրա: Դրանցից են Պ.Մ. Էրդինևի կողմից առաջ

քաշված «Դիդակտիկական միավորի խոշորացում» (ԴՄԽ), Շատալովի «Հենքային սխեմաներ» և այլ մանկավարժական տեխնոլոգիաներ, որոնց տարրերի կիրառումը ուսուցման գործընթացում մեծապես նպաստում է ոչ միայն ուսուցման արդյունավետության բարձրացմանը, այլ նաև հող նախապատրաստում հետագայում կրկնությունների ժամանակ բարձր արդյունքների հասնելուն:

Հայտնի է, որ գիտելիքների համակարգի ձևավորման գործընթացը հիմնված է տարբեր մակարդակների երևույթների միջև զուգահեռներ անցկացնելու վրա: Դա վերաբերում է ներառարկայական զուգահեռներին, որոնք արտահայտում են գիտելիքների համակարգի ներքին կապերը, իսկ հետագայում, վերացական մտածողության զարգացմանը զուգընթաց, հնարավորություն են տալիս անցկացնել միջառարկայական զուգահեռներ:

Հիմք ընդունելով կրկնության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը ներկայացվող մանկավարժահոգեբանական պայմանները՝ աշխատանքում բնագիտամաթեմատիկական առարկաների օրինակով ցույց է տրված, թե ինչպես կարելի է բարձրացնել այդ առարկաներից ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման արդյունավետությունը:

Հիմնավորված է, որ ուսումնական գործընթացում գիտական իմացության մեթոդների կիրառության հիմնահարցի էությունն այն է, որ ուսումնական գործընթացը ժամանակի տեսանկյունից սահմանափակ է: Մյուս կողմից, աշակերտների կողմից նոր հասկացություններ, գաղափարներ և գիտական մեթոդներ ընկալելու ժամանակը շատ ավելի մեծ է, քան դրանց ուսումնասիրության համար հատկացվող ուսումնական ժամանակը:

Վերոհիշյալ տեսական դատողություններն առավել առարկայական դարձնելու համար աշխատանքում ներկայացված են այդպիսի մոտեցման օրինակներ ֆիզիկայից, քիմիայից, մաթեմատիկայից և կենսաբանությունից:

Մասնավորապես ֆիզիկայի դասընթացից աղյուսակի միջոցով (աղյուսակ 1) ներկայացված է ֆիզիկայի հիմնարար օրենքներից մեկի՝ էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքի դրսևորման բոլոր դեպքերը, որոնք հանդիպում են ֆիզիկայի դպրոցական ողջ դասընթացում:

Աղյուսակ 1.

Էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքի դրսևորումները
Ֆիզիկայի դպրոցական դասընթացի տարբեր բաժիններում

Ֆիզիկայի բաժին	Ֆիզիկական օրենք, երևույթ կամ պրոցես	Էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքի մաթեմատիկական
Մեխանիկա	Լրիվ մեխանիկական էներգիայի պահպանման օրենքը	$E_l = E_k + E_{պ} = const$
	Լրիվ մեխանիկական էներգիայի փոփոխության թեղումը	$\Delta E_l = A_{ոչ պրոտ.} + A_{պրոտ.}$
	Իդեալական հեղուկի շարժումը	$p + \rho gh + \frac{\rho V^2}{2} = const$ (Բեռնուլիի հավասարում)
Ջերմադինամիկա	Ջերմային հավասարակշռություն	$Q_1 + Q_2 + \dots + Q_n = 0$ (Ջերմային հաշվեկշռի հավասարումը)
	Ջերմադինամիկայի I օրենքը	$\Delta U = Q + A$
	Ջերմամեքենայի աշխատանքը	$Q_1 = Q_2 + A$
Էլեկտրադինամիկա	Իդեալական տատանողական կոնտուր	$W_{էլ} + W_{մագ} = const$ $\frac{q^2}{2c} + \frac{Li^2}{2} = \frac{q_m^2}{2c} = \frac{Li_m^2}{2}$
	Ջոու-Լենցի օրենքը	$Q = I^2 \cdot R \Delta t$
Քվանտային ֆիզիկա	Ֆոտոէֆեկտ	$h\nu = A_{էլք} + \frac{mV^2}{2}$ (Այնշտայնի հավասարումը ֆոտոէֆեկտի համար)

Ուսուցման փորձը, ուսումնասիրությունները և մեր հարցումները ցույց են տվել կրկնությունների ժամանակ այսպիսի աղյուսակների կիրառման արդյունավետությունը: Բացի այն, որ դրանք պատկերավոր ներկայացնում են մեծածավալ տեղեկատվություն, աշակերտները վերհիշում են և համակարգում տարբեր տարիներին ուսումնասիրված և հիմքում մինևույն դրսևորումներն ունեցող իրողությունները:

Ատենախոսության **երկրորդ գլխի երրորդ** ենթագլխում ներկայացված են կրկնության կազմակերպման մանկավարժական մշտադիտարկման (մոնիթորինգ) անցկացումը և արդյունքների վերլուծությունը:

Հիմնավորված է գործընթացի մշտական վերահսկողությունը՝ նախնական կանխատեսումների կամ ցանկալի նպատակին նրա համապատասխանության բացահայտման համար: Մշտադիտարկումը կրթական ծառայությունների որակական զարգացմանն ու արդյունավետության դինամիկային հետևելու գործընթաց է: Այն ապահովում է հետադարձ կապ և կրթական գործառնություններ իրականացնող սուբյեկտներին տեղեկատվություն հաղորդում տրված չափանիշներին համակարգի գործունեության փաստացի արդյունքների համապատասխանության մասին:

Մանկավարժական մշտադիտարկման կազմակերպման ժամանակ մենք բախվեցինք մի շարք դժվարությունների: Դժվարություններից մեկն այն է, որ մշտադիտարկման արդյունքների վրա ներգործում են զանազան գործոններ՝ ուսուցչի անհատականության առանձնահատկությունները, փոխհարաբերությունները աշակերտների հետ, աշակերտների մտավոր զարգացման տարբերությունները և այլն: Այս դժվարությունները հաղթահարելու համար ստուգողական և փորձարարական խմբերն ընտրվում էին այնպես, որպեսզի բոլոր արտաքին գործոնները լինեն նույնատիպ, բացառությամբ այն փաստերի, որոնց գործողությունները դիտարկվում են մեր կողմից:

Մյուս դժվարությունն այն է, որ մի կողմից հավաստիության հստակեցման համար անհրաժեշտ էր փորձարկվողների մեծ քանակ, իսկ մյուս կողմից՝ մեծ քանակությունը թույլ չէր տալիս ամենայն խորությամբ և լիարժեք հետևել դժվար հսկվող փոփոխությունները, որոնք կապված են մտավոր գործունեության հետ: Այս դժվարությունը հաղթահարելու համար փորձարարական և ստուգողական խմբերի ընտրության ժամանակ իրականացվել է ներկայացուցչական ընտրություն:

Ստուգողական և փորձարարական խմբերի արդյունքների տարբերության ավելի խոր հետազոտության և ուսումնասիրության համար մենք կիրառել ենք երկրորդային վիճակագրական մշակման մեթոդները: Վստահ լինելու համար

նրանում, որ ընդհանուր խմբից առանձնացված խմբերում փոփոխությունները կհամընկնեն փոփոխությունների հետ, որոնք տեղի են ունենում մշտադիտարկման բոլոր մասնակիցների հետ, աշակերտների ընտրությունը հետազոտության համար իրականացվել է հետևյալ կերպ՝ ուսումնասիրվող հատկանիշների ընդհանուր բաշխումը ստուգողական և փորձարարական խմբերում մինչև մշտադիտարկման անցկացումը եղել են միանման:

Մշտադիտարկմանը մասնակցել են շուրջ 417 մասնակից՝ 32 ուսուցիչ, 385 աշակերտ:

Մշտադիտարկման առաջին փուլում ուսումնասիրվել է բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում կրկնության կազմակերպման իրական վիճակը: Առաջին փուլի հիմնական նպատակն է ստանալ առաջնային, ելքային տվյալներ: Մշտադիտարկման այս փուլում մեր կողմից օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ ուսուցիչների և աշակերտների գործունեության դիտարկում, հարցումներ, անկետավորում, թեստավորում:

Երկրորդ փուլը բնութագրվում է օպտիմալ պայմանների հայտնաբերմամբ: Այս փուլը ուղեկցվում է մեթոդների և հնարքների որոնմամբ:

Երրորդ փուլը միտված է համադրելու կանխատեսված արդյունքները ստացված արդյունքների հետ, կրկնության առաջարկված մանկավարժական պայմանների արդյունավետության չափանիշների մշակման համար:

Մեր կողմից իրականացվող մշտադիտարկման արդյունքների արդյունավետության գնահատումը իրագործվում է մաթեմատիկական վիճակագրության օգտագործմամբ:

Արդյունքների ստուգման համար անց է կացվել հաշվարկ Պիրսոնի գործակցով χ^2 : Նրա օգտագործման ցածր սահման է հանդիսանում 30 հոգանոց խումբը: Մեր դեպքում խումբը կազմված է 385 մարդուց, ինչը թույլ է տալիս կիրառել այս մեթոդը: Հաշվվում է $T_{\text{դիտ}}$ մեծությունը, որը բնութագրում է տվյալ ցուցանիշի աստիճանը կիսամյակի ընթացքում ավանդական ուսուցման պայմաններում:

Պիրսոնի չափանիշը $T_{\text{դիտ}}$ հաշվվում է այս բանաձևով.

$$T_{\text{դիտ}} = \frac{1}{n_1 \cdot n_2} \sum_{i=1}^c \frac{(n_1 Q_{2i} - n_2 Q_{1i})^2}{Q_{1i} + Q_{2i}}$$

n_1 - ստուգողական խմբի անդամների քանակը, n_2 - փորձարարական խմբի անդամների քանակը, Q_{1i} - փորձարարական խմբի անդամների քանակը,


որոնք հասել են i մակարդակի, Q_{2i} - ստուգողական խմբի անդամների քանակը հասել են i մակարդակի, c – առանձնացված մակարդակների թիվը:

Մեր կողմից անցկացվել է հարցում՝ պարզելու համար աշակերտների՝ կրկնությունների դասընթացներում ներգրավվելու պատճառները: Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ կրկնության մասնակիցների 20%-ի համար կարևոր են այն պատճառները, որոնք թելադրված են Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական, մշակութային և ժողովրդագրական արդի տեղաշարժերով՝ ստացված գիտելիքների լավ յուրացում, ամրապնդում, իսկ առարկայական նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ձեռք բերելու և դրանք արդյունավետորեն կիրառելու ձգտում ունեն հարցվածների 59%-ը, հարցվածների 21%-ը մեր կողմից կազմակերպված կրկնության ծրագրերում ընդգրկվել է ինքնաբերաբար, տվյալ ուսուցչի նախաձեռնությամբ:

Հաջորդ հարցումը, որն իրականացվել է մեր կողմից, հետևյալն է. արդիակա՞ն և բավարար արդյունավե՞տ է, արդյոք, ներկայումս կրկնությունների կատարելագործման հիմնախնդիրը բնագիտական առարկաներ ուսումնասիրելիս:

Ստացված պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսուցիչների մեծամասնությունը՝ 87%, արդիական է դիտում ժամանակակից պայմաններում կրթական գործընթացում կրկնությունների կազմակերպման կատարելագործման խնդիրը՝ դիտարկելով կրկնությունը՝ որպես ուսուցման ընդհանրացնող միջոց, և համոզված է, որ դիտարկվող խնդրի մեթոդական տեսանկյունները առավել խոր քննարկման և մշակման կարիք ունեն:


Գծանկար 2.
Ամփոփիչ կրկնությունների կազմակերպման կատարելագործման հիմնախնդրի արդիականության գնահատումը



Մեր կողմից իրականացված հարցումներում պարզել ենք նաև, թե այսօր աշակերտները ինչպե՞ս են գնահատում կրկնության գործընթացի արդիականացումն ու կատարելագործումը: Ստացված արդյունքները հետևյալն

են.

Գծանկար 2
Կրկնության գործընթացի կատարելագործման անհրաժեշտության գնահատումը



Գծանկարից պարզորոշ երևում է, որ հարցվածների զգալի հատվածը գտնում է, որ այսօր կրկնության գործընթացում անհրաժեշտ են փոփոխություններ, անհրաժեշտ է կատարելագործում:

Բնագիտական առարկաների կրկնության գործընթացի կազմակերպման մասնակիցներին առաջարկվել է նաև գնահատել այդ գործընթացի իրականացման մեթոդական, կազմակերպական, բովանդակային կողմերը: Կրկնության գործընթացի կազմակերպիչները նշել են հետևյալ դրական կողմերը՝ դիտարկելով կրկնության մեր կողմից առաջ քաշված արդյունավետ ուղին.

- սովորողների պահանջմունքների բավարարման հնարավորությունները,
- կրկնության գործընթացի կազմակերպումը և անցկացումը բարձր որակավորում և մոտիվացիա ունեցող մասնագետների կողմից,
- գործընթացի նյութատեխնիկական և համակարգչային ապահովումը, բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտը:
Աշակերտները նշում են հետևյալ դրական կողմերը՝
 - աշակերտների և ուսուցիչների միջև փոխըմբռնման, բարյացակամ հարաբերությունները, հաղորդակցումը,
 - բավականաչափ տեղեկատվության ձեռքբերումը կրկնության համեմատաբար մեղմ ժամկետներում,
 - կրկնության կազմակերպման բարձր որակը և դասագործընթացի հետաքրքրությունը:

Միաժամանակ մեր դիտարկումները ցույց տվեցին, որ կրկնությունների

կազմակերպման գործընթացում առկա են էական բացթողումներ և թերություններ՝

- դասավանդողների ոչ բավականաչափ իրազեկությունը,
- կրկնության գործընթացի կազմակերպման ոչ համապարփակ լինելը՝ որպես ընդհանրացնող օղակ,
- կրկնության գործընթացի տեխնոլոգիական և մեթոդական ոչ բավարար ապահովումը:

Մեր կողմից կազմակերպված կրկնության գործընթացի արդյունավետության որոշման համար իրականացվել է մշտադիտարկում նաև հետևյալ ուղղություններով.

- դիտարկելով կրկնությունն որպես ընդհանրացնող միջոց՝ բնագիտական առարկաների դասավանդման գործընթացում ստուգվել է տեխնոլոգիայի արդյունավետությունը՝ աշակերտների կողմից ֆիզիկայի դասընթացի կրկնության ընթացքում, մակարդակային տարբերակման պայմաններում,

- տվյալ տեխնոլոգիայի կիրառության արդյունավետությունը ստուգվել է նաև ամփոփումներ կատարելու կարողությունների ձևավորման պայմանների ապահովման գործում:

Տվյալ մշտադիտարկման արդյունավետության հիմնական չափանիշը աշակերտների՝ ֆիզիկայի տվյալ դասընթացից համապարփակ կարողությունների ձևավորման մակարդակն է: Որպես քանակական ցուցանիշ ընտրվել է Վ.Պ. Բեսպալկոյի կողմից առաջարկած K_a յուրացման գործակիցը, ինչպես նաև աշակերտների բաշխումն ըստ ուսումնական նյութի յուրացման մակարդակների (ճանաչման, ալգորիթմային գործունեության, էվրիստիկ գործունեության, ստեղծագործական գործունեության): Աշակերտների կողմից կատարված թեստերի արդյունքներով K_a գործակիցը հաշվարկվել է առանձին՝ յուրաքանչյուր աշակերտի համար, որից հետո հաշվարկվել է այդ գործակցի միջին թվաբանականը յուրաքանչյուր խմբի համար: Յուրաքանչյուր աշակերտի համար որոշվել է ուսումնական նյութի յուրացման մակարդակը և կատարվել է աշակերտների թվաքանակի բաշխումն ըստ յուրացման մակարդակների: Համաձայն տվյալ մեթոդիկայի՝ ուսուցման նպատակը խնդիրներ լուծելու կարողությունների ձևավորումն է, ինչը համապատասխանում է Վ.Պ. Բեսպալկոյի յուրացման II մակարդակին: Թեստերը ներառում էին յուրացման I, II, III մակարդակներին համապատասխանող առաջադրանքներ:

Թեստի 1-10-րդ հարցերը գնահատվել են 1-ական միավոր, 11-ից 20-րդ հարցերը՝ 2 միավոր, 21-30-ը՝ 3 միավոր: Ընդհանուր թեստը գնահատվում է 60 միավոր սանդակով:

Այն աշակերտները, ովքեր հավաքել են 0-20 միավոր՝ ներառվել են առաջին

խմբում, 21-40 միավոր ստացածները՝ երկրորդ խմբում, 41-ից բարձր միավոր ստացողները՝ երրորդ խմբում:

Փորձարկի անցկացման համար ընտրվել են ավագ դպրոցում սովորող 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտները:

Կրկնության գործընթացից հետո մեր կողմից իրականացվել է նաև թեստավորում՝ ստուգելու յուրացման մակարդակները: Թեստավորումը, որն անց է կացվել ուսուցման սկզբում, ցույց է տվել, որ ուսումնական նյութի յուրացման առաջին մակարդակում են գտնվել փորձարարական խմբում սովորողների 67,4% և ստուգողական խմբում սովորողների 68,7%: Ուսուցման ավարտին առաջին մակարդակում մնացին փորձարարական խմբում սովորողների 36,3% և ստուգողական խմբում սովորողների 67,2%: Փորձարարական խմբում սովորողների խմբի մեծ մասը, իսկ ավելի կոնկրետ 63,7% գործընթացի ավարտին գտնվում էր ուսուցման 2-րդ և 3-րդ մակարդակում, ստուգողական խմբում իրավիճակը փոխվեց աննշան, 1-ին և 2-րդ մակարդակը կազմեց սովորողների 32,8 %: Ըստ առաջադրված նպատակների կարելի է դատել սովորողների մոտ պահանջվող կարողությունների ձևավորման մասին:

Առաջարկվող մանկավարժական պայմանների արդյունավետության հաջորդ չափանիշը, որը բնութագրում է նրա ազդեցությունը կրթության, ինչպես նաև կրթվածության մակարդակի բարձրացման վրա, հանդիսանում է մեր կողմից առաջարկվող կրկնության կազմակերպման արդյունավետության ստուգումը, որը պայմաններ է ստեղծում ընդհանրացում կատարելու կարողության ձևավորման համար:

Փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքների համադրման համար կօգտվենք Պիրսոնի χ^2 մեթոդից: Եղիտ մեծությունը կարելի է ստանալ ստանդարտ կառուցվածքով (աղյուսակ 2):

Աղյուսակ 18.

Պիրսոնի χ^2 հայտանիշի փորձարարական հաշվարկը

Ուսուցանվող նյութի տեսական մասի յուրացման ցուցիչ					
Դասարաններ	Գնահատականներ				Ընդամենը
	0-2 (2)	3-5 (3)	6-8 (4)	9-10 (5)	
Փորձարարական	2	40	108	40	190
Ստուգողական	4	56	114	21	195
Ընդամենը	6	96	222	61	385
Եղիտ	12.70				
Գործնականում ստանդարտ խնդիրների լուծման կարողության ցուցիչ					

Դասարաններ	Գնահատականներ				Ընդամենը
	0-2 (2)	3-5 (3)	6-8 (4)	9-10 (5)	
Փորձարարական	1	18	81	90	190
Ստուգողական	6	43	86	60	195
Ընդամենը	7	61	167	150	385
Դրս	20.17				

Նոր իրավիճակներում արագ կողմնորոշվելու կարողության ցուցիչ

Դասարաններ	Գնահատականներ				Ընդամենը
	0-2 (2)	3-5 (3)	6-8 (4)	9-10 (5)	
Փորձարարական	2	43	95	50	190
Ստուգողական	9	66	100	20	195
Ընդամենը	11	109	195	70	385
Դրս	22.49				

Ստեղծագործական մոտեցմամբ ոչ ստանդարտ խնդիրների լուծման կարողության ցուցիչ

Դասարաններ	Գնահատականներ				Ընդամենը
	0-2 (2)	3-5 (3)	6-8 (4)	9-10 (5)	
Փորձարարական	2	40	98	50	190
Ստուգողական	9	70	91	25	195
Ընդամենը	11	110	189	75	385
Դրս	21.43				

Այսպիսով, մեր հետազոտությամբ հաստատվեց հետազոտության այն վարկածը, որ կրկնությունը պետք է դիտարկվի որպես ուսուցման ընդհանրացնող միջոց և կառուցվի նախկինում ուսուցանված նյութի հիմնարար, առանցքային գաղափարների և հասկացությունների վրա, այն չկրի տարերային բնույթ, այլ տեղի ունենա ընդհանրացնող կրկնությունների տարբեր տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած է կրկնությունը՝ որպես ընդհանրացնող միջոց հասկացությունը:

Ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաների հետազոտությունը մեզ թույլ է տալիս հանգել հետևյալ **եզրակացությունների**.

1. Ավագ դպրոցում բնագիտամաթեմատիկական առարկաների գծով

կրկնության կազմակերպման գործընթացը, որպես բազմաշերտ գործընթաց, ավելի արդյունավետ է դառնում, երբ բացահայտված և վերլուծված են բնագիտական առարկաների դասավանդման գործընթացի առանձնահատկությունները, հակասությունները՝ մի կողմից ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման գործընթացի վերջում ակնկալվող արդյունքի և կրկնությունների կազմակերպման արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաների բացակայության, և մյուս կողմից ավագ դպրոցում կրկնությունների կազմակերպման ժամանակ սովորողների տարիքահոգեբանական առանձնահատկությունների հաշվառման անհրաժեշտության և տարբերակված ուսուցման պայմաններում կրկնությունների կազմակերպման մանկավարժահոգեբանական համակարգի բացակայության միջև:

2. Ավագ դպրոցում կրկնությունն անհրաժեշտ է դիտարկել որպես ուսուցման ընդհանրացնող միջոց և հաշվի առնել ավագ դպրոցի աշակերտների տարիքային առանձնահատկությունները, կրկնության գործընթացի հիմքում դնել բազային գիտությունների հիմնարար գաղափարները:

3. Կրկնության գործընթացի մանկավարժահոգեբանական վերլուծության արդյունքում հիմնավորվեց, որ կրկնության ունակության ձևավորումը սովորողներից պահանջում է «ընթացիկ» գիտելիքների համակարգվածություն, որոնք անհրաժեշտ է վերաթարմացնել: Այս պարագայում կարևորագույն պայման է սովորողների ուսումնական գործընթացում կրկնությունների կազմակերպումը՝ որպես ընդհանրացնող, ամփոփող միջոց դիտարկելը:

4. Հետազոտությամբ որոշվել են կրկնության հիմնական ձևերի տեղն ու դերը բնագիտական առարկաների ուսուցման ժամանակ, վեր են հանվել կրկնության դիդակտիկական հիմնական առանձնահատկություններն ավագ դպրոցում: Այս տեսանկյունից հիմնավորվել է ընդհանրացնող կրկնության գաղափարը:

5. Տեսական հետազոտության ընթացքում մշակվել է բնագիտական առարկաների դասավանդման գործընթացում կրկնությունների կազմակերպման նոր արդյունավետ միջոցներ: Կրկնության իրականացման արդյունավետությունը պայմանավորված է կազմակերպական-մանկավարժական հետևյալ պայմանների իրականացմամբ՝ դասավանդողների իրազեկության բարձրացում, կրկնության կազմակերպման գործընթացի մշտադիտարկում:

6. Ավագ դպրոցում բնագիտամաթեմատիկական առարկաներից կրկնության կազմակերպման արդյունավետ մանկավարժական պայմանն այդ գործընթացում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումն է, որի միջոցով բացահայտվեց ավագ դպրոցում կրկնության

կազմակերպման գործընթացի համակարգվածության աստիճանը:

7. Մշտադիտարկման ընթացքում ստացված տվյալների գիտատեսական իմաստավորումը հնարավորություն տվեց նախանշել նոր միջոցներ, որոնք ուղղված են կրկնության գործընթացի կազմակերպման մակարդակի բարձրացմանը, ավագ դպրոցում ծրագրերի բովանդակության, ձևերի ու մեթոդների կատարելագործմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակություններում.

1. Գ. Գ. Քարհանյան, Ա. Ծատուրյան «Կրկնությունը որպես ուսուցման պրոցեսի կարևորագույն բաղադրամաս», Մանկավարժություն, 2008/3-4, Երևան, էջեր 56-64:

2. Գ. Գ. Քարհանյան «Ընդհանրացնող կրկնությունների կազմակերպման որոշ մանկավարժական հարցեր», «Մխիթար Գոշ», 2012/10-12, «ՍԻՄ» տպագրատուն, ք. Վանաձոր, էջեր 212-214:

3. Գ. Գ. Քարհանյան, Ա. Ծատուրյան «Պետական ավարտական և միասնական քննություններին բնագիտական առարկաների սովորողներին նախապատրաստելու հիմնահարցեր», «Բնագետ», 2014, հատուկ թողարկում, էջեր 161-163:

4. Գ. Գ. Քարհանյան «Բնագիտամաթեմատիկական առարկաների դպրոցական դասընթացների ընդհանրացնող կրկնությունների կազմակերպման արդյունավետ ուղիները ավագ դպրոցում», «Մանկավարժական միտք» 2014/3-4, ք. Երևան, էջեր 278-285:

КАРГАНЯН ГАРЕГИН ГАГИКОВИЧ
ЭФФЕКТИВНЫЕ ПЕДАГОГИЧЕСКИЕ ТЕХНОЛОГИИ ПОВТОРЕНИЯ
В СТАРШЕЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01-«Теория и история педагогики».

Защита диссертации состоится 12 декабря 2014 года в 14⁰⁰ на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК.

Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52^а, корпус факультета армянской филологии ЕГУ, 203 аудитория.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Современное общество вступило в такую фазу развития и трансформации, которая предполагает новый уровень взаимоотношений между людьми, различными народами и культурами. Эта ситуация требует новых подходов и характеристик в меж субъектных, межгрупповых взаимоотношениях, новых методов и форм в приобретении знаний, умений и навыков для понимания новых реалий.

В новой образовательной политике РА первоочередной задачей является обеспечение базовых и универсальных качеств современного образования.

В связи с переходом на 12-летнее образование возникла необходимость пересмотра учебных программ и планов. В частности, согласно действующим программам, второе полугодие 12-го класса полностью предоставляется проведению повторения, консультаций и индивидуальных занятий. Однако нельзя утверждать, что на сегодняшний день разработаны эффективные технологии обобщающих повторений, которые смогли бы обеспечить высокий уровень данных занятий, в частности, для естественнонаучных и математических дисциплин.

Учитывая значительное количество часов, отведенных в старшей школе на повторения, возникла необходимость проанализировать дидактическое значение организации повторения в педагогике и разработать новые психологопедагогические условия этого процесса с учетом особенностей преподаваемых дисциплин, возрастнопсихологических особенностей учащихся, с использованием современных педагогических технологий.

Целью данного исследования является разработка, теоретическое обоснование и мониторинг эффективных педагогических технологий процесса повторения в старшей школе с учетом особенностей процесса обучения.

Научная новизна исследования

1. Разработаны новые подходы, которые позволяют расширить возможности обобщающих повторений в старшей школе и повышают конкурентоспособность

учеников;

2. Разработаны и посредством мониторинга обоснованы новые направления и методы усовершенствования процесса повторения в старшей школе в результате внедрения эффективных педагогических технологий;

3. Впервые в РА проведено фундаментальное теоретическое исследование, касающееся организации процесса повторения в старшей школе, которое рассматривает повторение как обобщающий метод обучения.

Теоретическое значение исследования

1. Пересмотрена психологопедагогическая система организации процесса повторения в старшей школе, сформулированы концептуальные положения его эффективной организации;

2. Разработаны эффективные педагогические условия проведения повторения в старшей школе, принимая данный процесс как обобщающий метод обучения.

Практическое значение исследования

Основные положения и выводы диссертации могут послужить основой для организации в старшей школе процесса повторения по естественнонаучным дисциплинам, при разработке стратегии, новых программ, при проведении курсов усовершенствования учителей.

Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, выводов, списка использованной литературы. Диссертация изложена на 147 стр. компьютерного набора.

KARHANYAN GAREGIN GAGIK
THE EFFECTIVE PEDAGOGICAL TECHNOLOGIES OF REVISION
ORGANIZATION AT HIGH SCHOOLS

Pedagogical sciences candidate thesis on the specialty 13.00.01-“Theory and history of pedagogics”

The defense of the dissertation will be held at 14⁰⁰, on December 12, 2014, Professional Council of HQC pedagogy, acting at the Yerevan State University.

Address: 0025, Abovyan str. 52a, Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room 203.

SUMMARY

The relevance of the research. Modern society has undergone such an era of development and transformation, which presupposes a new level of communication among people, various nations and cultures. It- in its turn- requires new approaches and characteristics of intersubjective, intergroup communication, knowledge about their peculiarities, ways and means of obtaining capacities and skills.

The main priority in the new Education Policy of the RA consists in providing fundamental and overall useful education.

Transition to a 12-year education system gave new opportunities to revise education programs and plans. Mainly, due to current plans, the second term of 12th grade is supposed for to the organization of revision, consulting and private lessons for final exam subjects. However, it can't be stated, that today the effective generalizing revision organization technologies which can provide a high quality revisions, especially in the sphere of Natural Science and Mathematics, have been fully worked out.

Nowadays, taking into account a large number of lessons designed for High Schools, a necessity has occurred to get a new angle on the didactic importance of organizing revisions and to work out new pedagogical-psychological conditions based on fundamental sciences and age/psychological specificities of learners and modern teaching technologies.

The goal of the research is to work out and theoretically justify and monitor effective pedagogical technologies of revision organization at High Schools taking into consideration the characteristics of education process.

The novelty of the research:

1. There have been worked out new approaches, which enlarge the possibilities for implementing effective generalizing revisions and raise the competitiveness of learners.

2. Connected with the investment of effective pedagogical technologies there have been worked out and justified by monitoring new ways and means for improving the revision process organization at High Schools.

3. For the first time in the RA a fundamental theoretical research has been carried out in the field of revision organization at High Schools considering revision as a generalizing means of teaching.

The theoretical significance of the research:

1. The pedagogical-psychological system of revision organization has been reviewed from a new perspective and there have been highlighted conceptual provisions for the effective organization of revision at High Schools.

2. Considering revision as a generalizing means of teaching there have been worked out effective pedagogical conditions of revision organization at High Schools.

The practical significance of the research.

The main provisions and conclusions of the dissertation will contribute to the process of the revision organization of Science-Mathematical subjects at High Schools when working out corresponding strategies, creating new projects, as well as training teachers.

Structure of the dissertation.

The present dissertation consists of an introduction, two chapters, conclusions and a list of references. The work is expounded on 147 pages.

A handwritten signature in black ink, appearing to be 'G. P. ...', written on a light-colored background.